ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԴԻԶԱՅՆԵՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՈՌ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ,

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

Էլ. հասցե՝ *gor-meliksetyan@mail.ru*

DOI: 10.24234/scientific.v1i44.53

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում քննարկվում են դիզայներական գործունեության առանձնահատկությունները XXI դարի սկզբից: Լինելով ամենամասսայական արվեստի տեսակ՝ այն առաջացել է միայն 20-րդ դ. առաջին կեսին:

Այսօր դիզայներական ամենատարածված ոլորտները համարվում են առօրեական առարկաների արտադրությունը, գիտատեխնիկական հայտնագործությունների գեղարվեստական նախագծումները մինչև նորաձևության շուկայական ձևափոխումները: Հարմարավետության պահանջների աճը նաև ստիպում է դիզայներին անընդհատ աշխատանք ծավալել այնպիսի իրերի ձևային լուծումների որոնման վերաբերյալ, որոնք կհամապատասխանեն փոփոխվող իրականությանը:

Ժամանակակից դիզայներական գործունեությունը չի սահմանափակվում միայն առանձին իրերի գեղարվեստական լուծումներով: Այսօր նրա դիտարկման ներքո գտնվում է միջավայրն իր ամբողջությամբ, լինի դա թե՛ բնակելի կամ հասարակական շենքի ինտերիերի ձևավորում, թե՛ արտաքին տարածքների, լանդշաֆտների, քաղաքային միջավայրի դիզայն:

Հոդվածի նպատակն է վերհանել ժամանակակից դիզայնի գործունեության առանձնահատկությունները նրա տարաբնույթ բնագավառներում և մասնագետ դիզայներներին մատուցել տեխնոլոգիական կատարումները:

Հոդվածը կառուցված է գիտական հետազոտությանը համապատասխան

ուսումնասիրությունների հենքի վրա, ընդ որում ուսումնասիրվել են նախկինում եղած նախագծումները (հիմնականում տեխնիկական միջոցներով), և ներառվել են ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները, որտեղ հիմնականում կիրառվել է *համակարգչային դիզայն* հասկացությունը:

Բանալի բառեր՝ դիզայն, մոդելավորում, ֆոտոդիզայն, տեխնոլոգիա, ճարտարագիտություն, արդյունաբերական դիզայն:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից սոցիալ-տնտեսական և գիտակրթական բնագավառներում դիզայներական գործունեության հետաքրքրությունների զարգացման պայմանները որոշելու համար անհրաժեշտ է ճշտել հասարակության գեղարվեստական պահանջմունքների ձևավորման որոշ բնութագրեր, ցույց տալ դիզայների գեղարվեստանախագծային գործունեության առանձնահատկությունները՝ հաշվի առնելով նրա գրաֆիկական հենքը և ստեղծագործական ուղղվածությունը: Հաշվի առնել, որ կյանքի պայմանների փոփոխությունների արագության, ժամանակակից հասարակության աշխարհայացքի հետ կապված, ի հայտ են եկել հակասություններ դիզայներական արվեստի աճող պահանջի և որակական զարգացման և կատարելագործման ոչ բավարար ընթացքի միջև: Դրա հետ միաժամանակ պահանջմունքների նոր աճը բերում է վերաբերմունքի վերագնահատման, գոյություն ունեցող մարդկության կողմից կուտակված գիտելիքների համակարգի հանդեպ, ժամանակակից հանրության կյանքի համատեքստին համապատասխան:

Այս հիմնախնդիրը արդի պայմաններում քննարկում են հոգեբանները, մանկավարժները, արվեստագետները, սոցիոլոգները: Բազմազան հետազոտությունների հիմնական հետևությունները, անցկացված այս բնագավառում, արտացոլում են և նկարագրված են գիտական, արվեստաբանական, գիտամեթոդական գրականության մեջ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Դիզայնը՝ որպես մասնագիտություն գոյություն, ունի արդեն 100 տարի: Դրա հաշվարկը տարվում է 19-րդ դ. վերջից անգլիայում տեղի ունեցած «հանուն Արվեստի և Արհեստի կապի» հայտնի շարժումից, որի ղեկավարն էր առարկայական արվեստի հայտնի նկարիչ ու գործիչ Ուիլիամ Մորրիսը: Հենց այդ ժամանակ են

մշակվել դիզայնի գեղարվեստական սկզբունքներն ու տեսաբանական ուղղվածությունները, որոնք ազդել են հետագա տարիներին ստեղծված դիզայնի դպրոցների ու դիզայներական ուղղությունների վրա:

Գոյություն ունի կարծիք, համաձայն որի, դիզայնի, որպես մասնագիտության մասին կարելի է խոսել միայն այն ժամանակ, երբ ձևավորվեցին դիզայնի դասավանդման մեթոդներով առաջնորդվող դպրոցներն ու ի հայտ եկան առաջին դիպլոմավորված մասնագետները: Դա XX դարի 20-ական թթ., երբ բացվեցին դիզայնի առաջին դպրոցները՝ բաուհաուսը՝ Գերմանիայում ու վխուտեմասը՝ Ռուսաստանում:

Ըստ Ռիդի՝ «... դիզայնի զարգացման համար անհրաժեշտ համակարգերի փոփոխման հույսեր է կապվում դաստիարակության, կրթության հետ՝ ստեղծելու համար գեղագիտական գիտակցության նոր ձևեր» (Gloag J., 1956): Կա ևս մեկ այլ տեսակետ, որի համաձայն դիզայնի առաջացումը կապվում է 1929թ. մեծ ճգնաժամի ժամանակահատվածի հետ: Այն (դիզայնը) նկարագրվում է նախևառաջ որպես ամերիկյան ֆենոմեն: Եվ իսկապես, ընդհուպ մինչև մեծ ճգնաժամը եվրոպական դիզայնը շարունակում էր մնալ որպես տեղական լոկալ երևույթ և ազդեցություն չուներ պարտադրական գործընթացների վրա: Միայն ճգնաժամի սկզբին ամերիկյան դիզայնը դարձավ իրական առևտրական, կոմերցիոն ուժ՝ ժամանակի ընթացքում ստանալով մասսայական բնութագիր և մեթոդաբանություն:

«Դիզայնն ամերիկյան կյանքի անբաժանելի մասն է... դիզայնը հնարավորություն է տալիս մարդուն ապրել առավել առողջ և արդյունավետ կյանքով» (Բաղդասարյան Լ., 1991):

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Դիզայնը հանդիսանում է արվեստագետների աշխատանքային ջանքերի կիրառման և ներդրման հիմնական արդյունքը: Այստեղից էլ գալիս է այս ուղղության անվանումը ՝ «արտադրական արվեստ»: Այստեղ առաջնային տեղ են զբաղեցնում աշխատանքային միջոցների ու մեխանիզմների համակարգերը: Այս խմբում կարելի է ներառել նաև հաստոցների ու մեքենաշինական արտադրանքը, տրանսպորտային միջոցները, զենքերը, ինչպես նաև այն ամենն, ինչը հանդիսանում է «Ա»

դասակարգի արտադրանք: Այն որոշիչ դեր ունի երկրի ամբողջական զարգացման հարցում, այդ իսկ պատճառով էլ այստեղ են կենտրոնացվում հիմնական գիտական հետազոտությունները, գյուտարարական նախագծերը, ամենանոր տեխնոլոգիաներն ու հումքը: Այս ամենը հատուկ պատասխանատվություն է տալիս դիզայների աշխատանքին: Վերջինս այստեղ ստիպված է լինում ստեղծել սկզբունքորեն նոր արտադրանք, որը պետք է համապատասխանի անընդհատ փոփոխվող արտադրության պահանջներին: Իրերի ու առարկաների հարմարավետությունը, հումքի տնտեսումը, անվտանգ տեղափոխելիությունը. սրանք այն հարցերի շարքից են, որոնց դիզայները պետք է տա լիարժեք պատասխաններ:

Այսօր դիզայներական ամենատարածված ոլորտը համարվում է առօրեական առարկաների արտադրությունը, այպես կոչված «մասսայական օգտագործման առարկաները»: Դրանց թվում են խեցեղենը, տնտեսական ապրանքները, էլեկտրական սարքավորումներն ու մեխանիզմները, աուդիո-վիդեո սարքերը և ուրիշ մեզ շրջապատող առարկայական աշխարհը: Դրանք հանդիսանում են ամենատարածված դիզայներական գործունեության ոլորտները:

Նորաձևության փոփոխությունները և դրա հետ զուգահեռ շուկայի ձևափոխումները, հարմարավետության պահանջների աճը, ստպում են դիզայներին անընդհատ աշխատանք ծավալել այնպիսի իրերի ձևային լուծումների որոնման վրա, որոնք կհամապատասխանեն փոփոխվող իրականությանը: «Մեր հասարակությունը դժգոհում է նրանից, թե ապրանքային արտադրությունն ինչպես է վերափոխվում յուրաքանչյուր արվեստի ստեղծագործության, նա ավելին է ուզում, ուզում է, որ յուրաքանչյուր ապրանք լինի արվեստի ստեղծագործություն» (Nelson Q., 1957):

Դիզայներների աշխատանքային սիրված օբյեկտ է համարվում կահույքը: Թվով շատ քիչ դիզայներներ են դիմակայել իրենց սեփական կահույքի դիզայնը նախագծելու գայթակղությանը: Կահույքը հանդիսանում է դիզայնի յուրահատուկ բաղադրիչներից մեկը, որտեղ ամենաամբողջական եղանակով ներկայացվում են էրգոնոմիկայի հարցերը, կառուցողական որոշումների, տեխնոլոգիաների արտադրության, հումքի փոխկապվածության ու կառուցվածքների ու ձևերի

յուրահատուկ արվեստին տիրապետելու անհրաժեշտությունը, որոնք ազդվում են ժամանակակից նորաձևությունից: Կահույքի կառուցվածքի վրա հենվելով կարելի է ներկայացնել դիզայնի ամբողջական պատմությունը: Սկսած 19-րդ դարի Տոնետի «Վիեննական աթոռ»-ից մինչև ժամանակակից «Մեռլին» բազմոցը՝ ստեղծված Հանս Հոլյայնի կոմից:

Այսօր դիզայներները մեծ ուշադրություն են դարձնում հաշմանդամների, հենաշարժիչ մեխանիզմերի հետ խնդիրներ ունեցող մարդկանց, մեծահասակների համար նախատեսված կահույքի ու սարքավորումների ստեղծմանը: Դիզայնի պրակտիկայում գոյություն ունեն բազմաթիվ լուծումներ, որոնք կոչված են հեշտացնելու նման մարդկանց կյանքը: Դա արվում է հատուկ կահույքի ու սարքավորումների, սայլակների ու տեղափոխման հարմարանքների նախագծման ու թողարկման միջոցով: Այստեղ ներկայացվում է դիզայնի սկզբունքներից ամենակարևորը. այն կոչված է մարդկային կյանքի, մարդու մասին հոգ տանելու, առարկայական միջավայրը հարմարավետ դարձնելու համար իրերի ստեղծմանը:

Դիզայներների շրջանում բացի կահույքի նախագծումից մեծ տարածում ունի երեխաների համար խաղալիքների նախատիպերի ստեղծման պրակտիկան: Այսօր այն ամենատարածված դասավանդվող ու դիպլոմային ուղղությունն է դիզայնի առաջատար դպրոցներում: Ինչպես կահույքի, այնպես էլ խաղալիքների նախագծումը իր մեջ ներառում է դիզայներական առաջադրանքների համալիր, որը լուծում է պահանջում: Խաղալիքի հետ երեխան իրեն պետք է հարմարավետ զգա: Այն չպետք է առաջացնի բացասական ռեակցիաներ երեխայի մոտ, պետք է լինի ոչ շատ թանկարժեք և անվտանգ երեխայի առողջության ու կյանքի համար:

Ժամանակակից դիզայներական գործունեությունը չի բավարարվում միայն առանձին իրերի ստեղծմամբ: Այսօր նրա դիտարկման ներքո գտնվում է միջավայրն ամբողջությամբ վերցրված, լինի դա բնակելի կամ հասարակական շենքի ինտերյերի ձևավորումը, թե արտաքին տարածքների, լանդշաֆտների, քաղաքային միջավայրի դիզայնը: Այդ իսկ պատճառով կառուցվածքային հարմարավետ միջավայրի առաջադրումը կարելի է ներկայացնել բառացիորեն:

Եթե համեմատենք դիզայների առարկայական-տարածական միջավայրում արված աշխատանքը նկարչի ու ճարտարագետի կատարած աշխատանքի հետ,

ապա կարող ենք ասել, որ ճարտարագետը «կազմակերպում է տարածությունը»՝ շեշտադրումն իրականացնելով ճարտարագիտական դրամատուրգիայի, դռների ու պատուհանների ձևերի ընտրության, լուսավորության խաղերի վրա՝ մակերեսի գունային տարբերությունները հաշվի առնելով: Նկարիչը այդ տարածության մեջ «աշխատում է հարթության հետ» գեղագիտորեն իմաստավորելով այն, ներառելով գեղարվեստական կերպարներ ու նշաններ, բնապատկերներ ու քանդակներ՝ հաշվի առնելով միջավայրում դրանց ընկալումները: Դիզայները, իրականացնելով համապատասխան գործունեության գործընթացներ, այդ տարածությունը «սարքավորում է», մարդու համար մշակելով հոգեբանական ու ֆիզիկական հարմարավետություն ապահովող ու արտահայտող միջավայր: Դիզայներական գործունեության այս տեսակը ստացել է «*միջավայրի դիզայն*» անվանումը (Кириллова Л. И., 1973):

Այսօր արդեն գոյություն ունեն տարածության տարբեր տեսակներ, որոնք կազմակերպվում են դիզայնի օրենքներին համահունչ, ինչպես օրինակ՝ օդանավերի, նավերի, մարդատար գնացքի ուղևորների համար նախատեսված սրահների դիզայնի իրականացումը:

Դիզայնի ձևերի գործառնությունն ու ռացիոնալությունը որոշվում է առարկայի արտաքին տեսքով. նրա գեղագիտական որակները անմիջականորեն ազդում են վերջինիս մրցունակության վրա: Այս որակները որոշիչ դեր են խաղում շուկայում դրանց իրականացման ժամանակ:

Հայտնի է, որ իրի վրա յուրաքանչյուր նոր զարդի ավելացումը ազդում է վերջինիս արժեքի բարձրացման վրա՝ միաժամանակ իջեցնելով դրա մրցունակությունը: Դրա հետ մեկտեղ դեկորատիվ տարրը, որը պատրաստվում է մեքենայի օգնությամբ 1000-ավոր նմուշներով, կորցնում է իր յուրատիպությունը և դրան զուգահեռ տեղի է ունենում գեղարվեստական արժեքի անկում: Այս օրինակը բացահայտում է արտադրական դիզայնի նրբությունները՝ միաժամանակ ներկայացնելով վերջինիս զարգացման պատմությունը:

Մեքենայական արտադրությունը սկզբում իրականացվում էր իրերի ձևերի պատճենման համար, որոնք մինչև այդ համարվում էին արհեստավորների ձեռքի աշխատանքը: Այնինչ, նման արտադրանքի ստեղծման տեխնոլոգիան արդեն այլ էր:

Մեքենաների միջոցով ստեղծված իրերը միայն արտաքնապես էին նման արհեստավորների ձեռքի աշխատանքին, սակայն ունեին ոչ իրական տեսք:

Դիզայներները գտան այս խնդրի ելքը. վերջիններս սկսեցին իրերը «զարդարել» ոչ թե քանդակներից պատրաստված դեկորներով, այլև գործառնական առումով անհրաժեշտ բաղադրամասերով ու կառուցվածքներով: Իրերի կառուցվածքները սկսեցին առանձնակի ուշադրությամբ մշակել բազմատեսակ նախագծերում և նմուշներում ու դիզայների կողմից պատրաստված նախատիպերում, որոնցում ճշգրիտ արտահայտվում էր պատրատվելիք առարկայի նույնիսկ ամենափոքր մանրամասները՝ ներառելով կառուցողական-տեխնոլոգիական-գործառնական հատվածները: Ձևի գեղեցկությունը երևում էր տեկտոնիկ ու գործառնական ամբողջության մեջ:

Գործառնականը և արդյունավետը համարվում են դիզայնի փիլիսոփայության հիմնական ուղղությունները, որոնք միտված են քիչ ջանքերի ու ծախսերի իրականացմամբ առավել արդյունքի ստացմանը:

Պատահական չէ, որ պատմական ուսումնասիրություններում դիզայնը դիտարկվում էր 20-րդ դարում մի շարք երկրներում տարախում ստացած ճարտարագիտական «գործառնականի» ոճի հետ մեկտեղ: Եվ նրա վառ ներկայացուցիչները դարձան ժամանակակից դիզայնի հիմնադիրներ: «Դիզայնը միջոց է, որից օգտվելով՝ կարելի է ընկալել ինքդ քեզ: Ընդսմին դա միջոց է, որի օգնությամբ կարելի է ուրիշներին քեզ ընկալելի դարձնել» (Nelson Q., 1957):

Հումքի ու կառուցվածքների տնտեսումը, տարածության ռացիոնալ օգտագործումը համարվում են այն կարևորագույն սզբունքները, որոնք ներառված էին դիզայնի կրթական ծրագրերում ու դասավանդվում էին դիզայնի առաջատար այնպիսի դպրոցերում, որոնց թվում էր նաև ՎԽՈՒՏԵՄԱՍԸ:

Օրինակ՝ ուսանողներին տրվող առաջադրանքներում կային անպիսիք, որոնք պահանջում էին հեշտացնել գոյություն ունեցող առարկան (հանել նրա վրայի զարդերը, հեռացնել չաշխատող հատվածները), բարելավել գոյություն ունեցող իրը (դարձնել ավելի հարմարավետ, գործառնական):

Ձևերի շարժունությունն ու փոփոխականությունը դիզայներական արվեստում հայտնի է շատ վաղուց: Բավական է միայն հիշել քոչվորական տնակներն ու

շարժական վրանները:

Դիզայնում, որտեղ հիմնական սկզբունքներն են համարվում տարողունակությունը և կոմպակտությունը, տարածության ռացիոնալ և գիտակից օգտագործումը, շարժունությունն ու փոփոխականությունը ստանում են կարևոր նշանակություն: Առարկայի բաղադրամասերի ունակությունը փոխելու արտաքին ձևը, համապատասխան գործառույթներն ու կոնկրետ պայմաններում հարմարավետությունը համարվում են շարժունության գրավիչ առանձնահատկությունները և ակտիվորեն օգտագործվում են դիզայներական նախագծումներում:

Մասսայական արդյունաբերական արտադրության հայտնի խնդիրներից է թողարկվող ապրանքատեսակների սահմանափակ քանակությունը, ինչի արդյունքում առաջանում է իրերի արտաքին տեսքի միանմանություն: Դիզայներին այստեղ օգնության է հասնում սերիական թողարկվող մասերի փոփոխականության գործոնը, որը թույլ է տալիս կառուցվածքի ձևին համապատասխան փոփոխություն մտցնել արտադրվող էլեմենտների մեջ՝ ստեղծելով տարբեր պայմանների համար նախատեսված համալիր արտադրություններ:

Բազմազանության ստեղծման հարցում մեծ տեղ է տրվում արտաքին տեսքի համար նախատեսված տարբերակված գունային-մակերևույթային որոշումների ընդունմանը, որոնք իրականցվում են իրերի առանձին հատվածների նկատմամբ: Փոփոխականությունը թույլ է տալիս մեծ թվաքանակով արտադրանք թողարկել և միաժամանակ ապահովել թողարկվող արտադրության բազմազանությունը: Վերջինս էլ միտված է սպառողների ավելի լայն շրջանակի պահանջների բավարարմանը (Кондратьева К. А., 1984).

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կատարված ուսումնասիրությունը հանգեցնում է հետևյալին, որ դիզայնը, լինելով ազգային մշակույթի կարևորագույն բնագավառներից մեկը, միշտ էլ կապված է եղել տվյալ դարաշրջանի գեղագիտական մտքի զարգացման հետ: Պետք է հաշվի առնել, որ հենց այնպես չէին կարող գեղարվեստի ու ստեղծագործության վերոնշյալ ուղղություններն ու դիզայնը, ինչպես նաև նրանց տարրերը, ձևավորվել ու զարգանալ գեղագիտական տվյալ համակարգերից դուրս:

Այդպիսի բարձր մակարդակի համար պետք է լիներ համապատասխան միջավայր ու շրջապատ, ինչպես սեփական երկրում, այնպես էլ որոշակի քաղաքական, առևտրատնտեսական կապերով կապված երկրներում:

Դիզայնը մարդու կյանքի և գործունեության համար արդյունաբերական արտադրության միջոցով ստեղծվող ներդաշնակ առարկայական միջավայրի ձևավորման սոցիալ-մշակութային, տեխնիկական և գեղագիտական հիմնախնդիրներն ուսումնասիրող գիտակարգ է: Այն կազմում է դիզայնի տեսական հիմքը: Այլ կերպ «տեխնիկական գեղագիտությունն» ուսումնասիրում է դիզայնի հասարակական բնույթը և զարգացման օրինաչափությունները, գեղարվեստական նախագծման սկզբունքներն ու եղանակները:

Ստեղծագործող անձնավորության ամենակարևոր հատկանիշներից մեկը առարկան տարբեր կողմերից տեսնելու, ընկալելու, ներկայացնելու (նաև պատկերացնելու) կարողությունն է: Դիզայնի մասնագետի, և ընդհանրապես արվեստագետի կարևորագույն ընդունակություններից են այն բացահայտումները, որոնք մեզ՝ «շարքային դիտորդներիս», անգամ ամենասովորական առարկաների պարագայում ներկայացվում են նոր ձևով, մեկ այլ տեսանկյունից, երբեմն նաև նոր երևակայական տեսքով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Բաղդասարյան Լ. (1991). *Վաղը չէ մյուս օրը մտնելու ենք XXI դար*. Երևան: Արվեստ.

Кириллова Л. И. (1973). *Композиция в современной архитектуре*. Москва: Строй.

Кондратьева К. А. (1984). *Цвет художественном конструирование*. Москва: МВХПУ.

Nelson Q. (1957). *The problems of design*. New York: Whitney publications.

Gloag J. (1956). *The industrial art explained*. London: George Allen and Unwin limited.

REFERENCE LIST

Bagdasaryan L. (1991). My vojdyom v 21 vek ne zavtra *(We will enter the 21st century the day after tomorrow)*. Erevan: Iskusstvo.

Kirillova L. I. (1973). Kompoziciya v sovremennoj arhitekture *(Composition in modern*

architecture). Moskva: Stroj.

Kondrat'eva K. A. (1984). Cvet hudozhestvennom konstruirovanie *(Color Artistic Design)*. Moskva: MVHPU.

Nelson Q. (1957). *The problems of design*. New York: Whitney publications.

Gloag J. (1956). *The industrial art explained*. London: George Allen and Unwin limited.

РЕЗЮМЕ

ОСОБЕННОСТИ СОВРЕМЕННОЙ ДИЗАЙНЕРСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ

ГОР МЕЛИКСЕТЯН

В статье рассматриваются особенности дизайнерской деятельности с начала XXI века. Будучи наиболее популярным видом искусства, оно возникло только в первой половине 20 века.

Сегодня наиболее востребованным направлением дизайна считается производство повседневных предметов, арт-проектов научно-технических открытий до изменений на рынке моды. Повышение требований к комфорту также заставляет дизайнера постоянно работать над поиском формообразующих решений вещей, которые будут соответствовать меняющейся действительности.

Современная дизайнерская деятельность не ограничивается художественным решением отдельных вещей. Сегодня под его контролем находится окружающая среда в целом, будь то дизайн интерьера жилого или общественного здания или дизайн открытых пространств, ландшафтов, городской среды.

Цель статьи - осветить особенности современной дизайнерской деятельности в различных ее сферах и предоставить технологические представления профессиональным дизайнерам.

Статья построена в соответствии с научными исследованиями, при этом были изучены предыдущие разработки (в основном техническими средствами), а также включены современные информационные технологии, где в основном применялась концепция компьютерного дизайна.

Ключевые слова: дизайн, моделирование, фотодизайн, технологии, инженерия, промышленный дизайн.

ABSTRACT

FEATURES OF MODERN DESIGN ACTIVITY

GOR MELIKSETYAN

The article discusses the features of design activity since the beginning of the XXI century. Being the most popular form of art, it arose only in the first half of the 20th century.

Today, the most popular area of design is considered to be the production of everyday household items, art projects of scientific and technical discoveries before the fashion market changes. The growing demands on comfort also forces the designer to constantly work on finding form solutions for things that will meet the changing reality.

Modern design activity is not limited to artistic solutions of individual things. Today, the environment as a whole is under his supervision, whether it is the interior design of a residential or public building or the design of open spaces, landscapes, urban environment.

The purpose of the article is to highlight the features of modern design activity, in its various fields, and to present technological performances to professional designers.

The article is structured in relevant studies of scientific research, while examining previous designs (mainly by technical means), and includes modern information technology, where the concept of computer-aided design is particularly applied.

Key words: design, modeling, photo design, technology, engineering, industrial design.

Հոդվածը ստացվել է՝ 23.02.2023թ.

Հոդվածն ուղարկվել է գրախոսման՝ 24.02.2023թ.

Հոդվածը երաշխավորվել է հրատարակման՝ 03.04.2023թ.